Gmail

Hetq and MOM Team <hetq.mom@gmail.com>

Ի պատասխան հարցման

1 message

Anoush Hovhannisyan <anoushiknoush@gmail.com> Tue, Oct 14, 2025 at 5:44 PM
To: hetq.mom@gmail.com, narehpetrosian@gmail.com

Նարե ջան,

Ի պատասխան Ձեր հարցմանը, տրամադրում ենք անհրաժեշտ տեղեկատվությունը:

Հարց. Կարո՞ղ եք տրամադրել ձեր ընկերության կամ սեփականության կառուցվածքի ամփոփ նկարագիրը, եթե այդպիսի փաստաթուղթ գոյություն ունի:
Պատասխան. Կից կարող եք գտնել Սիվիլիթաս հիմնադրամի Կանոնադրությունը:

1. Խնդրում եմ տրամադրել «Սիվիլիթաս» հիմնադրամի 2024 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունից տեղեկություններ ընդհանուր եկամտի, գովազդից ստացված եկամտի և ընդհանուր ծախսերի մասին:

Պատասխան. Կից կարող եք գտնել Հիմնադրամի 2024թ. աուդիտը, ինչպես նաև եկամտի և ընդհանուր ծախսերի ամփոփ պատկերը:

2. Խնդրում եմ նշել՝ քանի աշխատակից ունի լրատվամիջոցը նամակին պատասխանելու պահի դրությամբ:

Պատասխան. Ներկա պահին Հիմնադարմն ունի 41 աշխատակից:

3. Ըստ Իրավաբանական անձանց պետական ռեգիստր ներկայացված իրական շահառուների հայտարարագրի՝ ԱՄՆ քաղաքացի Միհրան Մինասյանը «Սիվիլիթաս» հիմնադրամի իրական շահառուներից մեկն է: civilnet.am-ում նա ներկայացվում է նաև որպես հոգաբարձուների խորհրդի նախագահ: Խնդրում եմ տեղեկություններ տրամադրել նրա գործունեության վերաբերյալ:

Պատասխան. ԱՄՆ քաղաքացի Միհրան Մինասյանը հանդիսանում է Հարկային գծով գործընկեր (Enrolled Agent) BayState Accounting & Taxes, Inc-ում:

4. Խնդրում եմ տեղեկություններ տրամադրել նաև ԱՄՆ Գլենդել քաղաքի գրասենյակի ու դրա գործունեության վերաբերյալ:

ՀՀ-ում գրանցված Սիվիլիթաս հիմնադրամը և ԱՄՆ Գլենդել նահանգում գրանցված Սիվիլիթաս հիմնադրամը իրավաբանորեն որևէ կապ կամ առնչություն չունեն միմյանց հետ, չկա որևէ փոխկապակցվածություն: 2010 թվականից ի վեր ԱՄՆ Սիվիլիթաս հիմնադրամը նվիրատվություններ է փոխանցել մեզ մեր կանոնադրական նպատակների իրականացման համար, որը կարգավորվում է երկու հիմնադրամների միջև առկա Նվիրատվության պայմանագրով:

Anoush Hovhannisyan
HR Associate

The Civilitas Foundation
1 Northern Avenue, Suite 30
Email: hovhannesanush@gmail.com
+374 10 500 119, +374 93 27 96 02

ՍԻՎԻԼԻԹԱՍ CIVILITAS
ՀԻՄՆԱԴՐԱՄ FOUNDATION

Սիվիլիթաս Կանոնադրություն.pdf
3641K